

ԱՍՈՒԼԻԿ ԱԲԵՂԱՆ

ԵԹԵ...

Եթե ճար լիներ քո սիրով սիրել մեկս միասին,
Օ՛, որքան պիտի գեղեցիկ դառնար
Աշխարհն այս սրին՝
—Ո՛վ սուրբ Տիրամայր...

Եթե ճար լիներ քո սիրով այրել մեկս միասին,
Պիտի խավարը անծանոթ մնար
Հոգուս հատար՝
—Ո՛վ սուրբ Տիրամայր...

Եթե ճար լիներ մեծահոգությամբ
Սերում շնորհել մեկս միասին
Քո նմանությամբ,
Ես հավատում եմ՝
Ոչ ոք չէր տխրի մեր անձուկ կյանքում
Եվ կհավատա՛ր,
—Ո՛վ սուրբ Տիրամայր...

Եթե ճա՛ր լիներ.
Եթե ճա՛ր լիներ.
Եթե... լիներ ճար.
—Ո՛վ սուրբ Տիրամայր:

ԵՐԳԵՐ ԳՐՎԱԾ ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ

— Շուրթերս —
Ծարավ են աղոթքի,
Նարեկա վանքի՝ մի փոքրիկ ծաղկի
Եվ Վանա լճի՝ մի սափոր ջրի:

— Ոտքերս —
Երկար տարիներ սովոր են գնալ նույն
ճանապարհով
Նույն եկեղեցին են ինձ առաջնորդում...:

— Ձեռքերս—
Սովոր են գրկել տարածությունը,
Նրանք դեռ ունեն ավյուն իրենց մեջ՝
Վերցնելու համար ողբերգությունը
Նարեկա վանքի մեծ վանականի.....

— Աչքերս —
Եվ այդ էլ քանի՞ երկար տարիներ
Դեռ չեն կշտացել
Արարատ լեռան ձյունածածկ թագից:

ՔՈ ՄԻ ԲՈՒՌ ՀՈՂՈՒՄ

Քո մի բուռ հողում
Այնքա՞ն հոգնություն,
Այնքա՞ն տխրություն
Քո մի բուռ հողում:

Քո մի բուռ հողում
Այնքա՞ն արցունքներ,
Եվ արյան գետեր
Քո մի բուռ հողում:

Քո մի բուռ հողում
Այնքա՞ն խոյակներ,
Խաչե՞ր, խաչքարե՞ր,
Քո մի բուռ հողում:

Հայաստա՞ն երկիր,
Բակում փրկիչներ
Տեսա ես խաչված՝
Քո խաչի վրա...

Հայաստա՞ն երկիր,
Այսօր դու կրկին
Քո մի բուռ հողում
Արարում ես դու
Քո անմահ հոգին: